ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2
№ ՇՀԾՁԲ-7/13-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 30-ը հունվարի 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ.Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «"Լիվասա" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Կ. Պետրոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 24.12.2015թ. կնքված № ՇՀԾՁԲ-7/13-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.3 և 7.1 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված լվացքի ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար(սույն ՀամաձայնագրիN 2 Հավելված):

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 31 957 200 /երեսունմեկ միլիոն ինն հարյուր հիսունյոթ հազար երկու հարյուր / ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան՝ 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 20.12.2017թ (սույն Համաձայնագրի N 2 Հավելված):

Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 5 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 4 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	"Լիվասա" ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Արցախի 4-րդ նրբ., 14 շ.
ՀՀ ՖՆ աշխատակազմի գանձապետական վարչություն	«Արցախբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144070	Հ/h 22307600314200
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 02236972
ՀՀ պաշտպանության նախարարության	տնօրեն
ՆՏԱ դեպարտամենտի պետ	
Գ.ԱՎԱՐԱՊԵՏՅԱՆ	Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հ/ա
սեղ ԱԿ 0240029

Հավելված N 1
№ ԵՀԾՁԲ-7/13-3 գնման պայմանագրի N 2 համաձայնագրի

Քաղաքացիական լվացքատներում կատարվող լվացքի ծառայության գնման ժամանակացույց

Հ/հ	Տեղակայման վայրը ըստ զորամասերի	Չ/մ	Մեկ միավորի գինը ՀՀ դրամ	2017թ.												Ընդհանուր քանակը՝	Ընդհանուր գումարը ՀՀ դրամ
				Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտ	Հոկտ	Նոյեմ	Դեկտեմ.		
	Երևանի կայազոր-2, այդ թվում															151920	25066800
1	14018/59559 /Երևան/	կգ	165	2 158	2 158	2 158	1 780	1 810	1 810	1 600	1 600	1 600	1 810	2 158	2 158	22 800	3762000
2	55076 /Բալահովիտ/	կգ	165	3 293	3 293	3 293	2 687	2 736	2 736	2 400	2 400	2 400	2 736	3 293	3 293	34 560	5702400
3	96583 /Հրազդան/	կգ	165	406	406	406	280	290	290	220	220	220	290	406	406	3 840	633600
4	25149 /Երևան/	կգ	165	69	69	69	54	57	57	50	50	50	57	69	69	720	118800
5	26338 /Երևան/	կգ	165	104	104	104	80	85	85	75	75	75	85	104	104	1 080	178200
6	14746 /Երևան/	կգ	165	1 622	1 622	1 622	1 370	1 390	1 390	1 250	1 250	1 250	1 390	1 622	1 622	17 400	2871000
7	50552 /Երևան/	կգ	165	389	389	389	287	296	296	240	240	240	296	389	389	3 840	633600
8	55537 /Երևան/	կգ	165	462	462	462	345	357	357	294	294	294	357	462	462	4 608	760320
9	31549 /Երևան/	կգ	165	1 367	1 367	1 367	1 124	1 146	1 146	1 013	1 013	1 013	1 146	1 367	1 367	14 436	2381940
10	32277 /Արտաշատ/	կգ	165	2 156	2 156	2 156	1 769	1 801	1 801	1 588	1 588	1 588	1 801	2 156	2 156	22 716	3748140
11	77765/88863 /Երևան/	կգ	165	816	816	816	726	726	726	616	616	616	726	816	816	8 832	1457280
12	14172 /Երևան/	կգ	165	1 372	1 372	1 372	1 120	1 140	1 140	1 000	1 000	1 000	1 140	1 372	1 372	14 400	2376000
13	20440 /Երևան/	կգ	165	304	304	304	214	214	214	104	104	104	214	304	304	2 688	443520
	Արմավիրի կայազոր, այդ թվում															41760	6890400
1	41096 /Էջմիածին/	կգ	165	122	122	122	92	108	108	93	93	93	108	122	122	1 305	215325

2	13516 /Էջմիածին/	կգ	165	2 957	2 957	2 957	2 423	2 462	2 462	2 167	2 167	2 167	2 462	2 957	2 957	31 095	5130675
6	54850 /Մորոնի/	կգ	165	892	892	892	727	741	741	650	650	650	741	892	892	9 360	1544400
Ընդհանուր գումարը 31 957 200 /երեսունմեկ միլիոն ինն հարյուր հիսունյոթ հազար երկու հարյուր / ՀՀ դրամ																	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

"Լիվասա" ՍՊԸ
ք. Երևան, Արցախի 4-րդ նրբ., 14 շ.
«Արցախբանկ» ՓԲԸ
Հ/h 22307600314200
ՀՎՀՀ 02236972
տնօրեն

Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հ/ա
ակց. AK 0240024

Հավելված N 2

№ ԾՀՄՁԲ-7/13-3 գնման պայմանագրի N 2 համաձայնագրի

Քաղաքացիական լվացքատներում կատարվող լվացքի ծառայության վճարման ժամանակացույց

Հ/հ	Տեղակայման վայրը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 20.12.2017թ											
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	14018/59559 /Երևան/	356070	712140	1068210	1361910	1660560	1959210	2223210	2487210	2751210	3049860	3405930	3762000
2	55076 /Բալահովիտ/	543345	1086690	1630035	2073390	2524830	2976270	3372270	3768270	4164270	4615710	5159055	5702400
3	96583 /Հրազդան/	66990	133980	200970	247170	295020	342870	379170	415470	451770	499620	566610	633600
4	25149 /Երևան/	11385	22770	34155	43065	52470	61875	70125	78375	86625	96030	107415	118800
5	26338 /Երևան/	17160	34320	51480	64680	78705	92730	105105	117480	129855	143880	161040	178200
6	14746 /Երևան/	267630	535260	802890	1028940	1258290	1487640	1693890	1900140	2106390	2335740	2603370	2871000
7	50552 /Երևան/	64185	128370	192555	239910	288750	337590	377190	416790	456390	505230	569415	633600
8	55537 /Երևան/	76230	152460	228690	285615	344520	403425	451935	500445	548955	607860	684090	760320
9	31549 /Երևան/	225555	451110	676665	862125	1051215	1240305	1407450	1574595	1741740	1930830	2156385	2381940
10	32277 /Արտաշատ/	355740	711480	1067220	1359105	1656270	1953435	2215455	2477475	2739495	3036660	3392400	3748140
11	77765/88863 /Երևան/	134640	269280	403920	523710	643500	763290	864930	966570	1068210	1188000	1322640	1457280
12	14172 /Երևան/	226380	452760	679140	863940	1052040	1240140	1405140	1570140	1735140	1923240	2149620	2376000
13	20440 /Երևան/	50160	100320	150480	185790	221100	256410	273570	290730	307890	343200	393360	443520
14	41096 /Էջմիածին/	20130	40260	60390	75570	93390	111210	126555	141900	157245	175065	195195	215325
15	13516	487905	975810	1463715	1863510	2269740	2675970	3033525	3391080	3748635	4154865	4642770	5130675

	/Էջմիածին/												
16	54850 /Մորդնի/	147180	294360	441540	561495	683760	806025	913275	1020525	1127775	1250040	1397220	1544400

CPV-ի կոդը՝ 98311100/1/4/1

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

"Լիվասա" ՍՊԸ
ք. Երևան, Արցախի 4-րդ նրբ., 14 շ.
«Արցախբանկ» ՓԲԸ
Հ/h 22307600314200
ՀՎՀՀ 02236972
տնօրեն

Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հ/ա
ակտ AK0240024

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ՇՀՄՁԲ-7/13-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 29. 01. 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «"Լիվասա" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Կ. Պետրոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 24.12.2015թ. կնքված № ՇՀՄՁԲ-7/13-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.3 և 7.1 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված լվացքի ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար(սույն ՀամաձայնագրիN 2 Հավելված):

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 38 573 568 /երեսունութ միլիոն հինգ հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր վաթսունութ / ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան՝ 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 25.12.2016թ (սույն Համաձայնագրի N 2 Հավելված):

Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 5 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 4 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

3. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	"Լիվասա" ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Արցախի 4-րդ նրբ., 14 շ.
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շենգավիթի մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/հ 163018225868
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 02236972
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված N 1
№ ԵՀՕՋԲ-7/13-3 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

Քաղաքացիական լվացքատներում կատարվող լվացքի ծառայության գնման ժամանակացույց

Հ/հ	Տեղակայման վայրը ըստ զորամասերի	Չ/մ	Մեկ միավորի գինը ՀՀ դրամ	2016թ.												Ընդհանուր քանակը՝	Ընդհանուր գումարը ՀՀ դրամ
				Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտ	Հոկտ	Նոյեմ	Դեկտեմ.		
	Երևանի կայազոր-2, այդ թվում															163 814,4	
1	14018/59559 /Երևան/	կգ	165	2 097	2 097	2 097	1 872,6	1 912	1 912	1 700	1 700	1 700	1 912	2 097	2 097	23 193,6	3826944
2	55076 /Թալահիվազ/	կգ	165	3 124	3 124	3 124	2 791	2 849	2 849	2 534	2 534	2 534	2 849	3 124	3 124	34 560,0	5702400
3	96583 /Հրազդան/	կգ	165	347	347	347	314	316	316	281	281	281	316	347	347	3 840,0	633600
4	25149 /Երևան/	կգ	165	403	403	403	360,4	367	367	326	326	326	367	403	403	4 454,4	734976
5	26338 /Երևան/	կգ	165	105	105	105	90	95	95	84	84	84	95	105	105	1 152,0	190080
6	14746 /Երևան/	կգ	165	1 597	1 597	1 597	1 426	1 456	1 456	1 295	1 295	1 295	1 456	1 597	1 597	17 664,0	2914560
7	50552 /Երևան/	կգ	165	347	347	347	314	316	316	281	281	281	316	347	347	3 840,0	633600
8	55537 /Երևան/	կգ	165	417	417	417	375	379	379	337	337	337	379	417	417	4 608,0	760320
9	31549 /Երևան/	կգ	165	1 514	1 514	1 514	1 351,4	1 380	1 380	1 227	1 227	1 227	1 380	1 514	1 514	16 742,4	2762496
10	32277 /Արտաշատ/	կգ	165	2 360	2 360	2 360	2 114	2 152	2 152	1 914	1 914	1 914	2 152	2 360	2 360	26 112,0	4308480
11	77765/88863 /Երևան/	կգ	165	798	798	798	717	728	728	647	647	647	728	798	798	8 832,0	1457280
12	14172 /Երևան/	կգ	165	1 458	1 458	1 458	1 305	1 329	1 329	1 182	1 182	1 182	1 329	1 458	1 458	16 128,0	2661120
13	20440 /Երևան/	կգ	165	244	244	244	214	221	221	197	197	197	221	244	244	2 688,0	443520
	Արմավիրի կայազոր, այդ թվում															69 964,8	
1	41096 /Էջմիածին/	կգ	165	120	120	120	105,6	105	105	95	95	95	105	120	120	1 305,6	215424

2	40359 /Չորանքարա/	կգ	165	263	263	263	200	201	201	190	190	190	201	263	263	2 688,0	443520
3	80088 /Աշտարակ/	կգ	165	910	910	910	812,8	829	829	737	737	737	829	910	910	10 060,8	1660032
4	13516 /Էջմիածին/	կգ	165	3 150	3 150	3 150	2 827,2	2 874	2 874	2 556	2 556	2 556	2 874	3 150	3 150	34 867,2	5753088
5	43755 /Չորանքարա/	կգ	165	930	930	930	835,2	848	848	754	754	754	848	930	930	10 291,2	1698048
6	54850 /Մարալիկ/	կգ	165	972	972	972	870	886	886	788	788	788	886	972	972	10 752,0	1774080
Ընդհանուր գումարը																	38 573 568 /երեսունութ միլիոն հինգ հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր վաթսունութ / ՀՀ դրամ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

"Լիվասա" ՍՊԸ
ք. Երևան, Արցախի 4-րդ նրբ., 14 շ.
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շենգավիթի մ/ճ
Հ/հ 163018225868
ՀՎՀՀ 02236972
տնօրեն

Ս. ԵՍՐՈՅԱՆ

Հավելված N 2

№ ԵՀԾՁԲ-7/13-3 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

Քաղաքացիական լվացքատներում կատարվող լվացքի ծառայության վճարման ժամանակացույց

Հ/հ	Տեղակայման վայրը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ											
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	14018/59559 /Երևան/	346005	692010	1038015	1346994	1662474	1977954	2258454	2538954	2819454	3134934	3480939	3826944
2	55076 /Բայանովիր/	515460	1030920	1546380	2006895	2476980	2947065	3365175	3783285	4201395	4671480	5186940	5702400
3	96583 /Հրազդան/	57255	114510	171765	223575	275715	327855	374220	420585	466950	519090	576345	633600
4	25149 /Երևան/	66495	132990	199485	258951	319506	380061	433851	487641	541431	601986	668481	734976
5	26338 /Երևան/	17325	34650	51975	66825	82500	98175	112035	125895	139755	155430	172755	190080
6	14746 /Երևան/	263505	527010	790515	1025805	1266045	1506285	1719960	1933635	2147310	2387550	2651055	2914560
7	50552 /Երևան/	57255	114510	171765	223575	275715	327855	374220	420585	466950	519090	576345	633600
8	55537 /Երևան/	68805	137610	206415	268290	330825	393360	448965	504570	560175	622710	691515	760320
9	31549 /Երևան/	249810	499620	749430	972411	1200111	1427811	1630266	1832721	2035176	2262876	2512686	2762496
10	32277 /Արտաշատ/	389400	778800	1168200	1517010	1872090	2227170	2542980	2858790	3174600	3529680	3919080	4308480
11	77765/88863 /Երևան/	131670	263340	395010	513315	633435	753555	860310	967065	1073820	1193940	1325610	1457280
12	14172 /Երևան/	240570	481140	721710	937035	1156320	1375605	1570635	1765665	1960695	2179980	2420550	2661120
13	20440 /Երևան/	40260	80520	120780	156090	192555	229020	261525	294030	326535	363000	403260	443520
14	41096 /Էջմիածին/	19800	39600	59400	76824	94149	111474	127149	142824	158499	175824	195624	215424
15	40359 /Չորանքարա/	43395	86790	130185	163185	196350	229515	260865	292215	323565	356730	400125	443520
16	80088 /Աշտարակ/	150150	300300	450450	584562	721347	858132	979737	1101342	1222947	1359732	1509882	1660032
17	13516	519750	1039500	1559250	2025738	2499948	2974158	3395898	3817638	4239378	4713588	5233338	5753088

	/Էջմիածին/												
18	43755 /Չոբանքարա/	153450	306900	460350	598158	738078	877998	1002408	1126818	1251228	1391148	1544598	1698048
19	54850 /Մողնի/	160380	320760	481140	624690	770880	917070	1047090	1177110	1307130	1453320	1613700	1774080

CPV-ի կոդը՝ 98311100/1/4/1

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

"Լիվասա" ՍՊԸ
ք. Երևան, Արցախի 4-րդ նրբ., 14 շ.
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շենգավիթի մ/ճ
Հ/հ 163018225868
ՀՎՀՀ 02236972
տնօրեն

Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՀԾՁԲ-7/13-3

ք. Երևան 24-ը դեկտեմբերի 2015թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և "Լիվասա" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Կ. Պետրոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է լվացքի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխան:

1.3 Ծառայությունը կմատուցվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, համաձայնագիր կնքելու միջոցով: Ընդ որում Կատարողը պարտավոր է համաձայնագիրը կնքել՝ դրա վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Կանխավճար նախատեսվելու դեպքում Կատարողը պարտավոր է ներկայացնել կանխավճարի ապահովում՝ ընդ որում ապահովումը ներկայացվում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Հակառակ դեպքում գնման պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանի լուծվում է: Այն դեպքում, երբ սույն պայմանագիրը կնքելու օրվան հաջորդող տարիների ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվի՝ պայմանագիրը կլուծարվի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 77 147 136 (յոթանասունյոթ միլիոն մեկ հարյուր քառասունյոթ հազար մեկ հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում, վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ այն երկկողմ հաստատելու պահից՝ 15 բանկային օրվա ընթացքում՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում լրացուցիչ կնքվելիք Համաձայնագրով սահմանված վճարման ժամանակացույցով /Հավելված N 3/:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2017թ. դեկտեմբերի 30-ը: Գնորդը պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2, N3 և N4,4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.11 Սույն պայմանագով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	"Լիվասա" ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Արցախի 4-րդ նրբ., 14 շ.
ՀՀ ՖՆ աշխատակազմի գանձապետական վարչություն	«ՀայէկոնոմԲանկ» ԲԲԸ, Շենգավիթի մ/6
Հ/Հ 900011144079	Հ/h 163018225868
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 02236972
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-	տնօրեն
ՆՏԱ դեպարտամենտի պետ	
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ	Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված N 1
N ՇՀԾՁԲ-7/13-3 պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Լվացքի ծառայություն /ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԼՎԱՑՔԱՏՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՎԱՑՔ/

Կեղտոտ սպիտակեղենի և համազգեստի լվացում

1.Կեղտոտ սպիտակեղենը տեսակավորել և լվանալ ըստ կեղտոտվածության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ աստիճանների, չորացնել և արդուկել՝

- անկողնային սպիտակեղեն, (սավան բամբակյա, բարձի երես բամբակյա, վերմակածրար բամբակյա, սրբիչներ խավավոր և վաֆլե, սրբիչ վաֆլե բաղնիքի), լվացումը շաբաթական մեկ անգամ,
- ներքնազգեստ՝ (շապիկ բամբակյա, ներքնաշոր տաք), լվացումը շաբաթական մեկ անգամ,
- հոսպիտալային և խոհարարական հանդերձանք և սպիտակեղեն, լվացումը շաբաթական մեկ անգամ,
- համազգեստի պարագաներ, (ամառային համազգեստի լվացում՝ ամիսը մեկ անգամից ոչ ավել, ձմեռային համազգեստի լվացում՝ տարին մեկ անգամ, ամառվա ամիսներին):

Լվացքի տեղափոխությունը իրականացնել փակ թափքով բեռնատար ավտոմեքենաներով, թափքի ներսը պետք է լինի մաքուր և համապատասխանի բոլոր սանիտարական նորմերին: Մաքուր սպիտակեղենի տեղափոխությունը լվացքատնից զորամաս իրականացնել թափանցիկ պոլիէթիլենային պարկերի մեջ:

2. Կեղտոտ և լվացած սպիտակեղենի տեղափոխությունը պետք է իրականացնի լվացք կատարող կազմակերպությունը:

- Կեղտոտ և մաքուր լվացքի հանձնում-ընդունումն իրականացնել զորամասի և կազմակերպության կողմից համատեղ կազմված գրաֆիկի համաձայն:
- Բացառել պատռված, լվացման ոչ ենթակա սպիտակեղենի (կոշիկի քսուկոտ, յուղոտ և այլն) հանձնում-ընդունումը:
- Բացառել այլ զորամասի պատկանող «ղրոշմավորմամբ» սպիտակեղենի հանձնումը տվյալ զորամասին:
- Ոտքի սրբիչների լվացումը և փաթեթավորումը կազմակերպել առանձնացված:
- Լվացքի հանձնում-ընդունումը կազմակերպել միմիայն կազմակերպության կողմից լիազորված անձանց (առաքիչ) միջոցով:
- Կազմակերպության կողմից լիազորված անձն իր հետ պետք է ունենա կազմակերպության կողմից տրված անձը հաստատող փաստաթուղթ (լիազորագիր) 3x4 չափսի լուսանկարով:
- Ծառայություն մատուցող կազմակերպության կողմից պատռված սպիտակեղենի կամ համազգեստի նորոգումն իրականացվում է տվյալ կազմակերպության հաշվին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	"Լիվասա" ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Արցախի 4-րդ նրբ., 14 շ.
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շենգավիթի մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/հ 163018225868
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 02236972
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ -	տնօրեն
ՆՏԱ դեպարտամենտի պետ	
Ա. ԱՍԱՏՐՅԱՆ	Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված N 2
N ՇՀԾՁԲ-7/13-3 պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման առարկա	Չ/մ	Ընդհանուր քանակը	Մեկ միավորի գին /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գումար /ՀՀ դրամ/	Ծառայությունների մատուցումը
1	**Երևանի կայազոր-2-ի տարածքում ներառված զորամասերի լվացքի ծառայություն**	կգ	327 628.8			Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում
Ծառայության մատուցման վայրեր(ըստ քանակների)	14018/59559 /Երևան/	կգ	46 387.2	165	7 653 888	
	55076 /Բալահովիտ/	կգ	69 120	165	11 404 800	
	96583 /Հրազդան/	կգ	7 680	165	1 267 200	
	25149 /Երևան/	կգ	8 908.8	165	1 469 952	
	26338 /Երևան/	կգ	2 304	165	380 160	
	14746 /Երևան/	կգ	35 328	165	5 829 120	
	50552 /Երևան/	կգ	7 680	165	1 267 200	
	55537 /Երևան/	կգ	9 216	165	1 520 640	
	31549 /Երևան/	կգ	33 484.8	165	5 524 992	
	32277 /Արտաշատ/	կգ	52 224	165	8 616 960	
	77765/88863 /Երևան/	կգ	17 664	165	2 914 560	
	14172 /Երևան/	կգ	32 256	165	5 322 240	
	20440 /Երևան/	կգ	5 376	165	887 040	
2	**Արմավիրի կայազորի տարածքում ներառված զորամասերի լվացքի ծառայություն**	կգ	139 929.6			
Ծառայության մատուցման վայրեր(ըստ քանակների)	41096 /Էջմիածին/	կգ	2 611.2	165	430 848	
	40359 /Չոբանքարա/	կգ	5 376	165	887 040	
	80088 /Աշտարակ/	կգ	20 121.6	165	3 320 064	
	13516 /Էջմիածին/	կգ	69 734.4	165	11 506 176	
	43755 /Չոբանքարա/	կգ	20 582.4	165	3 396 096	
	54850 /Մուղնի/	կգ	21 504	165	3 548 160	
Ընդամենը	77 147 136 (յոթանասունյոթ միլիոն մեկ հարյուր քառասունյոթ հազար մեկ հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

"Լիվասա" ՍՊԸ
ք. Երևան, Արցախի 4-րդ նրբ., 14 շ.
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շենգավիթի մ/ճ
Հ/հ 163018225868
ՀՎՀՀ 02236972
տնօրեն

Կ. ԴԵՍՏԻՍՅԱՆ

Հավելված N 3
N ԵՀԾՁԲ-7/13-3 պայմանագրի

Վճարման ժամանակացույց

հ/հ	Գնման առարկան	Նախատեսվում է ֆինանսավորել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում՝ լրացուցիչ կնքվելիք Համաձայնագրերով սահմանված վճարման ժամանակացույցով
1	Լվացքի ծառայություն	77 147 136

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի տնօրեն

Ա. ԵՂԻԶԱԲԵԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

"Լիվասա" ՍՊԸ
ք. Երևան, Արցախի 4-րդ նրբ., 14 շ.
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շենգավիթի մ/ճ
Հ/հ 163018225868
ՀՎՀՀ 02236972
տնօրեն

Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված N 4
N ԵՀՄՁԲ-7/13-3 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
N ԾՀԾՁԲ-7/13-3 պայմանագրի

ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ——————(Պատվիրատուի անունը)——————ի (այսուհետ՝ Պատվիրատու) ——————(Կատարողի անունը)——————ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ——— -ին կնքված N ——————ման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ——— – -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

———————————
ազգանուն, անուն

———————————
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

———————————
ազգանուն, անուն

———————————
ստորագրություն